«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1361-22.05.2026-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ ստորև ներկայացնում է իր դիտարկումներն ու առաջարկությունները:

1. Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է օրենքի 3-րդ հոդվածում լրացնել նոր 1.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հայաստանի Հանրապետության դրոշը մշտապես բարձրացվում է Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր համայնքի վարչական տարածքի հիմնական մուտքերի մոտ:»:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ «համայնքի վարչական տարածքի հիմնական մուտքերի» ձևակերպումն անորոշ է և պարզ չէ, թե որ հատվածում է Նախագծով նախատեսվում տեղակայել ՀՀ դրոշը, ուստի իրավական որոշակիություն ապահովելու տեսանկյունից, առաջարկում ենք վերանայել Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված կարգավորումը կամ Նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ լրացուցիչ պարզաբանել առաջարկվող կարգավորումը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Երևանի վարչական սահմանները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով, իսկ նույն օրենքի 6.1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի սահմանների նկարագրությունը տրվում է նույն օրենքի բաղկացուցիչ մաս կազմող հավելված 6-ում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ոչ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով և ոչ էլ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում «համայնքի վարչական տարածքի հիմնական մուտք» ձևակերպում առկա չէ, ավելին՝ Երևան համայնքի

վարչական սահմանների նկարագրությունը տրված է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքի N 6 հավելվածով, որի համաձայն՝ Երևան համայնքի վարչական սահմանները նկարագրվում են քարտեզագրական և տեղագրական տվյալներով՝ սահմանային նկարագրությամբ՝ առանց հիմնական կամ այլ մուտքերի առանձնացման, ուստի առաջարկվող կարգավորումն անհասկանալի է և անորոշ:

Վերոնշյալ դիտողությունը վերաբերում է նաև մյուս համայնքներին, որոնց վերաբերյալ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքի համապատասխան հավելվածներում նույնպես համայնքի վարչական տարածքի հիմնական մուտքերի վերաբերյալ նկարագրություն առկա չէ:

Միաժամանակ հայտնում ենք, որ վարչական տարածքները կարող են ունենալ մի քանի մուտք, ուստի անհասկանալի է նաև, թե դրանցից որը կարող է համարվել հիմնական:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ Նախագծով նախատեսվող կարգավորումը ենթակա է վերանայման:

2. Նախագծի 1-ին հոդվածով ՀՀ դրոշը նախատեսված է բարձրացնել ՀՀ յուրաքանչյուր *համայնքի վարչական տարածքի հիմնական մուտքերի* մոտ, իսկ Նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ ՀՀ դրոշը պետք է բարձրացնել *յուրաքանչյուր քաղաքային և գյուղական բնակավայրի վարչական սահմանի մուտքի մոտ:*

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն *Համայնքներն ինքնակառավարվող վարչատարածքային միավորներ են:*

Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերը՝ առանձին կամ այլ բնակավայրի (բնակավայրերի) հետ միասին, ընդգրկվում են համայնքների մեջ:

Հայաստանի Հանրապետության համայնքների ցանկը, ըստ նրանց կազմում ընդգրկված բնակավայրերի, տրվում է սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 2-ում:

Վերոնշյալ կարգավորումից բխում է, որ բնակավայրերը ներառված են համայնքների մեջ, ուստի Նախագծով նախատեսված կարգավորման և Նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ նախատեսված առաջարկի միջև առկա է հակասություն, քանի որ անհասկանալի է՝ միայն յուրաքանչյուր համայնքի, թե բնակավայրերից յուրաքանչյուրի մուտքի մոտ է նախատեսվում դրոշը տեղադրել:

Այս կապակցությամբ առաջարկում ենք Նախագծով նախատեսված կարգավորումը վերանայել կամ Նախագծի և Նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ սահմանված կարգավորումները համապատասխանեցնել միմյանց:

3. Նախագիծն անհրաժեշտ է լրացնել նոր դրույթով, ըստ որի կսահմանվի, որ դրոշի տեղադիրքի, բարձրացման կարգի և այլ չափանիշների առանձնահատկությունները սահմանում է Կառավարությունը՝ ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում: Այս համատեքստում անհրաժեշտ է հստակեցնել նաև թե որ մարմինն է պատասխանատու դրոշի բարձրացման և սպասարկման համար (մարզպետ, համայնք): Լրացուցիչ կարգավորման անհրաժեշտություն կունենան դրոշի բարձրացման տեղադիրքի (հողամասի, գույքի) պատկանելությանն առնչվող հարցերը:

Ամփոփելով վերոշարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախագիծն անհրաժեշտ է լրամշակել ներկայացված դիտարկումների և առաջարկությունների հիման վրա: